«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/26-1

ք. Երևան «12» նոյեմբեր 2020 թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամն ի դեմս ռեկտոր Վ. Ուռուտյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Եղիազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ընդհանուր շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 100 օրացույցային օր: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, հանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 20429000 (քսան միլիոն չորս հարյուր քսանինը հազար) ՀՀ դրամ, որից 3404833 (երեք միլիոն չորս հարյուր չորս հազար ութ երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	Էլիտ Հիլզ ՍՊԸ
ք. Երևան, Տերյան 74	Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
«Արդշինբանկ» ՓԲԸ	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 247010053103	Հ/Հ1150014351360100
ՀՎՀՀ 01507028	ՀՎՀՀ 04421922
Ռեկտոր՝ ----------Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ	Տնօրեն՝ ----------Հ.Եղիազարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում, պայմանագրի մեջ կարող են ներառվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դրույթներ:

Հավելված թիվ 1
« 12 » հունիսի 2026թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/26-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Քանակը	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդամենը
1	Պատերի և հատակների նախապատրաստում	մ^2	230.68	500	115340
2	Ակոսների քանդում էլ. մալուխների համար	գծ.մ	60	835	50100
3	Ավտոմատների տուփի տեղադրում 6 տեղ պատի մեջ ամրացնելով գաջով	հատ	1	8250	8250
4	Ավտոմատների տեղադրում տարբեր հզորության լեգրանդ կամ համանման	հատ	4	4125	16500
5	էլ.մալուխների մոնտաժ գաջի սվաղի տակ ՊՊՎՐ, 2x2,5մմ^2	գծ.մ	300	660	198000
6	էլ.մալուխների մոնտաժ գաջի սվաղի և կեղծ առաստաղի տակ ՊՊՎՐ, 2x1,5մմ^2	գծ.մ	300	495	148500
7	էլ.տուփերի տեղադրում փոսորակներում և ամրացում գաջով	հատ	20	165	3300
8	Խողովակների ապամոնտաժում	գծ.մ	25	330	8250
9	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում, PN 16, d=20x2,8մմ ձևավոր կցամասերով զոդումով	գծ.մ	6	1650	9900
10	Մուֆտ անցում փոխակերպիչ պոլիպրոպիլենային, զոդումով, ներքին պարույրով d=20մմ	հատ	1	1650	1650
11	Անցում բրոնզյա արտաքին պարույրով d=15մմ	հատ	1	1650	1650
12	Փական գնդիկավոր, 1/2" F	հատ	1	4950	4950
13	Կոյուղու պոլիվինիլքլորիդե de50(PE), SN4 պատի հաստ. 2,5մմ, խողովակների տեղադրում սոսինձով, ձևավոր մասերով, պատի վրա անուրներով ամրացված	գծ.մ	15	2200	33000
14	Դռների փոխարինում մետաղոպլաստ դռների	մ^2	3.64	45300	164892
15	Արտաքին դռանփոխարինում մետաղանդռնով, երեսպատված լամինատեսալով, առկա դռների համանման, փականներով:	մ^2	3.64	90700	330148
16	Պատերի, դռների և պատուհանների շեպերիսվաղում, կարգաբերում գաջով կամ համանման նյութով՝ գիպսոնիտով	մ^2	100	4125	412500
17	Կեխծ առաստաղի մոնտաժ գիպսոկարտոնից համապատասխան ուղղանկյուն մետաղական խողովակների կարկասի վրա	մ^2	54.28	9000	488520
18	Պատերի, առաստաղիհարդարում և վերականգնում ծեփամածիկներով	մ^2	230.68	1070	246827.6
19	Պատերի և առաստաղի եռաշերտ ներկում լատեքսային ներկով	մ^2	230.68	1070	246827.6
20	Լուսամփոփների՝ LED SPO-6-36-4K-P ЭРА 600x600 կամ համանման տիպի տեղադրում	հատ	8	16500	132000
21	Լվացարանների տեղադրում	հատ	1	33000	33000
22	Անջատիչների տեղադրում	հատ	2	2450	4900

23	Վարդակների տեղադրում	հատ	18	2450	44100
24	Լամինատե հատակի իրականացում	մ^2	54.28	7900	428812
25	Շրիշակի տեղադրում	գծ.մ	42	785	32970
26	Մետաղական ճաղավանդակի իրականացում պատուհանների վրա	մ^2	24.3	16900	410670
27	Պատուհանագոգերի փոխարինում, կարգաբերում 80սմ հաստությամբ	գծ.մ	9.5	8600	81700
	Հողանցման աշխատանքներ				
28	Ճանապարհի բետոնաքարերի ապամոնտաժ	մ^2	4.41	3700	16317
29	Փոսորակի մշակում 2,1մ x 2,1մ x 2,0մ էքսկավատորով կողլիցքով	մ^3	8.2	5000	41000
30	Փոսորակի մշակում ձեռքով կողլիցքով	մ^3	0.62	13300	8246
31	50x50x4 անկյունակներից քառանկյունի կոնտուրի պատրաստում և տեղադրում զոդումով	գծ.մ	16	4125	66000
32	Պողպատե 40x4 հարթաթիթեղի մոնտաժ, արտաքին պատի վրա ամրացնելով և զոդելով կոնտուրին	գծ.մ	20	3300	66000
33	Ավազի շերտ իրականացում h=0.3մ	մ^3	1.2	6800	8160
34	Խրամուղու ետլիցք մշակված գրունտով, էքսկավատորով	մ^3	8.82	1800	15876
35	Ճանապարհի բետոնաքարեր իմոնտաժ ավազով	մ^2	4.41	3700	16317
	Անվտանգության համակարգ				
36	Ազդարարման համակարգ SP5500 (K636)	հատ	1	9900	9900
37	Շարժմանտվիչ SEC 6511	հատ	3	16500	49500
38	Ջարդմանտվիչ	հատ	2	16500	33000
39	Մագնիսական կոնտակտ	հատ	1	8250	8250
40	Ծխիտվիչ	հատ	2	8250	16500
41	Բացմանտվիչ	հատ	1	16500	16500
42	Մարդկոց 7A 12V	հատ	1	41250	41250
43	Շչակներսի SV-OS214	հատ	1	49500	49500
44	Մալուխ 4x0,22	գծ.մ	100	495	49500
45	Մալուխ 2x0,75	գծ.մ	5	1650	8250
46	Զանգահարող սարք GSM	հատ	1	33000	33000
	4-րդ հարկի լաբ.				
47	Պատերի և առաստաղի նախապատրաստում	մ^2	108.9	220	23958
48	Ակոսների քանդում էլ.մալուխների համար	գծ.մ	44	190	8360
49	Ավտոմատների տուփի տեղադրում 6տեղ պատի մեջ ամրացնելով գաջով	հատ	2	8250	16500
50	Եռաֆազ ավտոմատի տեղադրում40Ա լեգրանդ կամ համանման	հատ	1	8250	8250
51	Եռաֆազ ավտոմատի տեղադրում 32Ա լեգրանդ կամ համանման	հատ	1	8250	8250
52	Ավտոմատների տեղադրում տարբեր հզորության լեգրանդ կամ համանման	հատ	4	4100	16400
53	էլ.մալուխների մոնտաժ գաջի սվաղի տակ պղնձե, ВВГ, 4x6մմ^2	գծ.մ	6	2750	16500
54	էլ.մալուխների մոնտաժ գաջի սվաղի տակ պղնձե, ВВГ, 4x4մմ^2	գծ.մ	15	2200	33000
55	էլ.լարերի մոնտաժ գաջի սվաղիտակ ՊՊВГ, 2x2,5մմ^2	գծ.մ	50	660	33000
56	էլ.մալուխների մոնտաժ գաջի սվաղի և կեղծ առաստաղի տակ ՊՊВГ, 2x1,5մմ^2	գծ.մ	40	620	24800
57	էլ.տուփերի տեղադրում փոսորակներում և ամրացում գաջով	հատ	10	165	1650
58	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում, PN 16, d=20x2,8մմ ձևավոր կցամասերով զոդումով	գծ.մ	6	1925	11550
59	Մուֆտ անցում փոխակերպիչ պոլիպրոպիլենային, զոդումով, ներքին պարույրով d=20մմ	հատ	1	1650	1650
60	Անցում բրոնզյա արտաքին պարույրով d=15մմ	հատ	1	1650	1650

61	Փական գնդիկավոր, 1/2" F	հատ	1	4950	4950
62	Կոյուղու պոլիվինիլքլորիդե de50(PE), SN4 պատի հաստ. 2,5մմ, խողովակների տեղադրում սոսինձով, ձևավոր մասերով, պատի վրա անուրներով ամրացված	գծ.մ	6	1925	11550
63	Պատերի, դռների շեպերի սվաղում գաջով կամ համանման նյութով	մ^2	20	4125	82500
64	Պատերի, առաստաղի հարդարում և վերականգնում ծեփամածիկներով	մ^2	108.9	1000	108900
65	Պատերի և առաստաղի եռաշերտ ներկում լատեքսային ներկով	մ^2	108.9	1000	108900
66	Լուսամփոփների՝ LED SPO-6-36-4K-P ЭРА կամ համանման տիպի տեղադրում	հատ	6	16500	99000
67	Լվացարանների տեղադրում	հատ	1	33000	33000
68	Անջատիչների տեղադրում	հատ	1	3300	3300
69	Վարդակների տեղադրում	հատ	9	2560	23040
70	Մանրահատակի հղկում և լաքապատում	մ^2	36.6	2700	98820
71	Շրիշակի տեղադրում	գծ.մ	42	590	24780
72	Պատուհանագոգերի փոխարինում, կարգաբերում 80սմ հաստությամբ	գծ.մ	3.8	8700	33060
	2-րդ մասնաշենքի միջանցք				
73	Պատերի և առաստաղի նախապատրաստում	մ^2	134	185	24790
74	էլ.մալուխների մոնտաժ գաջի սվաղի և կեղծ առաստաղի տակ ՊՊՎԳ, 2x1,5մմ^2	գծ.մ	40	495	19800
75	Պատերի, առաստաղի հարդարում և վերականգնում ծեփամածիկներով	մ^2	134	1000	134000
76	Պատերի և առաստաղի եռաշերտ ներկում լատեքսային ներկով	մ^2	134	1000	134000
77	Լուսամփոփների՝ LED SPO-6-36-4K-P ЭРА կամ համանման տիպի տեղադրում	հատ	6	16500	99000
78	Անջատիչների տեղադրում	հատ	1	3064.76	3064.8
79	Շրիշակի տեղադրում	գծ.մ	42	590	24780
	1-ին մասնաշենք 3րդ հարկ				
80	Պատերի և առաստաղինախապատրաստում	մ^2	1715.02	192	329283.8
81	Միջնապատիապամոնտաժ	մ^2	22.8	1080	24624
82	Հատակինախաշերտիքանդում 5սմ հաստությամբ, մանրահատակիհետմիասին	մ^2	56	590	33040
83	Կոյուղու d=50մմ պոլիվինիլքլորիդեխողովակներիտեղադրում, պատիհաստ. 2,2մմ; L=1000մմ ամրացումով	գծ.մ	40	2500	100000
84	Կոյուղուպոլիվինիլքլորիդե d=50մմ Ձևավորմասերիտեղադրում	հատ	30	825	24750
85	Խմելուջրամատակարարման d=20մմ պոլիպրոպիլենայինխողովակներիտեղադրումամրացումով, համապատասխանձևավորմասերիզոդումով և պատերիանցքերիբացումով:	գծ.մ	40	2475	99000
86	Պղնձյաէլ.մալուխներիարտաքինմոնտաժտուփախողովակում 5x6մմ^2	գծ.մ	35	3300	115500
87	Տուփախողովակիտեղադրում 25x16	գծ.մ	35	1880	65800
88	Տուփախողովակիտեղադրում 16x16	գծ.մ	30	1650	49500
89	Ալյումինեէլ.մալուխներիարտաքինմոնտաժտուփախողովակում 1x10մմ^2	գծ.մ	35	470	16450
90	Պղնձյաէլ.մալուխներիհատակովմոնտաժմետաղոպլաստխողով ակիմեջ 5x4մմ^2 հատակով	գծ.մ	15	2200	33000
91	Պղնձյաէլ.մալուխներիհատակովմոնտաժմետալոպլաստխողով ակիմեջ 5x2,5մմ^2 ակոսներով	գծ.մ	30	1650	49500
92	էլ.հաղորդալարիպղնձե, ՊՊՎԳ, 3x4մմ^2 ներքինմոնտաժակոսներում	գծ.մ	200	1320	264000
93	էլ.մալուխներիներքինմոնտաժ 3x2,5 ակոսներում	գծ.մ	500	825	412500
94	էլ.մալուխներիներքինմոնտաժ 2x1,5 ակոսներում	գծ.մ	550	510	280500
95	Ներքինէլ.տուփերիևերկստեղայինանջատիչներիտեղադրումգա	հատ	15	2750	41250

	ջովամրացում				
96	Ներքինէլ.տուփերիևերկբևռայինվարդակներիտեղադրում,գաջովամրացում	հատ	120	2475	297000
97	էլ.ավտոմատներիարկղ 60x60	հատ	1	66000	66000
98	Էլ.ավտոմատներիտուփ 12 տեղ, ներքինտեղադրումով	հատ	1	16500	16500
99	Եռաֆազէլ.ավտոմատների 25Ա-63Ատեղադրում	հատ	3	11000	33000
100	Էլ.ավտոմատների 16Ա-40Ա տեղադրում	հատ	16	3600	57600
101	Հատակիհարթեցնողցեմենտ-ավազային Մ100, Բ 7.5 շերտիպատրաստում 5սմ հաստությամբ	մ^2	56	3530	197680
102	Հատակիսալիկապատումսոսինձովշրիշակներով	մ^2	61	12200	744200
103	Լվացարանիտեղադրումջրամատակարարմանծորակի և սիֆոնիմիացումովգծին	հանգ	2	41250	82500
104	Լուսամփոփների՝ LED SPO-6-36-4K-P ЭРА կամհամանմանտիպիտեղադրում	հատ	61	16500	1006500
105	Դռներիփոխարինումմետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ	մ^2	45.63	45000	2053350
106	Միջնորումներմետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ	մ^2	36.5	31200	1138800
107	Պատերի, առաստաղիհարդարում և վերականգնում, գաջով, գիպսոնիտով և ծեփամածիկով	մ^2	1715.02	1650	2829783
108	Պատերի և առաստաղիեռաշերտներկումլատեքսայիններկով	մ^2	1715.02	1660	2846933.2
109	ՕդամդիչՊատուհանի, 150/6" PLLS, 32 Вт, 380մ^3/ժ	հատ	1	330000	330000
110	Հատակիմանրահատակիհողկում, կարգաբերում և եռաշերտլաքապատում	մ^2	260	2538	659880
111	Օդափոխությանխողովակցինկապատվածթիթեղից d=150մմ առաստաղից և արտաքինպատիցամրացումով	գծ.մ	30	8250	247500
112	Լամինացված 60x2400մմ շրիշակներիտեղադրում	գծ.մ	300	990	297000
113	Շին.աղբիբարձում և տեղափոխում 15կմ	մ^3	15	6600	99000
	Ընդամեը				**100%**
	***Ընդհանուրը**				**20429000**

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝20%

** Կապալառուն աշխատանքները կատարում է **ՀԱԱՀ հիմնադրամում՝ ք. Երևան, Տերյան 74** հասցեում և պարտավորվում է պահպանել Հիմնադրամի ներքին կանոնակարգը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ---------- /Ա.ՓԱՀԱՆԴՈՒՏՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Էլիտ Հիլզ ՍՊԸ
Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ1150014351360100
ՀՎՀՀ 04421922

Տնօրեն՝ ---------- /Հ.Եղիազարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 12 » հունիսի 2026թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/26-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀԱԱՀ-ի I մասնաշենքի 315 Կադրերի աշխատասենյակի, 4 հարկի լսարանի. 2 –րդ մասնաշենքի 1 հարկի և 1-ին մասնաշենքի, 3-րդ հարկի մասնակի վերանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀԱԱՀ-ի I մասնաշենքի 315 Կադրերի աշխատասենյակի, 4 հարկի լսարանի. 2 –րդ մասնաշենքի 1 հարկի և 1-ին մասնաշենքի, 3-րդ հարկի մասնակի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 100 օրացույցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 100 օրացույցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ ---------------- Վ.ՓԻՐՈՒՄՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Էլիտ Հիլզ ՍՊԸ
Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ1150014351360100
ՀՎՀՀ 04421922

Տնօրեն---------------Հ.Եղիազարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
« 12 » հունիսի 2026թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/26-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142	Ընդհանուր շինարարական աշխատանքներ	-	-	-	-	-	20429000	20429000	20429000	20429000	20429000	20429000	20429000	**20429000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ _____ Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Էլիտ Հիլզ ՍՊԸ
Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ1150014351360100
ՀՎՀՀ 04421922

Տնօրեն՝ _____ Հ. Եղիազարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« 12 » հունվար 2020թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/26-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 12 » հունվար 2026թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/26-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն